

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

	Երևան
ԽՄԲԱՀՐԱԿԱՆ	
— Վարդանանք.	81
ԿՐՕՆՈԿԱՆ	
— Թուղր Պօղոսի առաքելոյն առ Կորնքացիս.	Ս. Վ. Մ.
— Ժամանակին հետ.	Ս. Վ. Տ.
	85 87
ՔԱՆԱՍՏԵՂԱԿԱԼՆ	
— Ապերախտը.	ԱՐԱ ԶՈՎԵԱՆ
— Ես խրացած իղձ ու երազ...	Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
	90 91
Հայաստանայց Ծիկնեցին (8).	Ե. Վ. Տ.
	92
ԳՐԱԿԱՆ	
— Երեխն...	Ց. ՕՇԱԿԱՆ
	95
ՊԱՏՄԱԿԱՆ	
— Կիլիկեան ամրոցներ — Անաւարզա.	ԱՐՏԱԼԻԱԶԴ ԱՐԳԵՎԻՍԿՈՎՈՍ
	99
ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Նոր վաւերագիրներ Խաչակ Օրիի մասին.	ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԻՆԱՆ
	101
ԳԻՏԱԿԱՆ	
— Մեր դարը.	Ց. ՇԵԶԱՄԵՆԱՆ
	106
Ս. ՑԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ	
— Ամսօրեայ լուրեր.	
	108
ՏԻՐՈՒՆԻ	
— Յակոբ Օօական.	
	109
Յակոբ Օօական.	ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ
	111

Բ Ա Ժ Ե Ե Գ Ի Ն

ՍԻՌՈՒԻ Տարեկան բաժնեզինն է՝ բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 10
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԿԻԿ է

Հասցե՝ Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

ՅՈԲԵԼԵԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ Յ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՔԱՌԱՍԽԱՄԵԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՄ

ՆԱԽԱՉԵՆՈՒԹԵԱՄ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

Յոբելինական հանդէսը պիտի կատարուի 1948 Ապրիլ 4-ին, նոր կիրակի,
Նիկոսիյ Հայկական Ակամիքի սրահին մէջ, ժողովրդական
հանդիսուրեամբ եւ Յոբելեարին ներկայութեամբ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՆԵՐ

Հայկազուն Յ. Յակոբեան ծնած է Էլերէկ: Նախնական կրթութիւնը ստացած եւ
աւարտած է տեղուոյն վարժարանին մէջ եւ 1897ին Տարսոնի Ամերիկան Գոլէճը գա-
ցած է, ուսումնառունէ եւ աղքատիկ մօրք զողողութեամբ: Առաջին տարին, Գոլէճը
միայն մէկ ոսկի առած է իր կրթաթոշակ, բայց Յակոբեանի աշխատասիրութիւնը եւ
վարժանանաչութիւնը գնահատելով, Գոլէճին Նախագահը յաջորդ տարիներուն ընդու-
նած է զինք իր ծրագլարձ ուսանող, յայտարարելով այսպէս «Գոլէճը բաց է այս-
պիսի ուսանողաց առջև»:

2. Յ. Յակոբեան իր աղքատիկ ձնողաց օգնելով համար, Գոլէճի ուսանողութեան
շրջանին ստանձնած է Տարսոնի Ազգ. Վարժարանի Տնօրէնի եւ Երաժիշտի պաշտօնը:
Գոլէճը աւարտած է 1905 ին՝ բացառիկ յաջողութեամբ եւ «Պասկալոր Արուեստից»
սիմոռոսով:

1905 - 1906 ին Միփի Ազգ. Վարժարանի մէջ ուսուցչութիւն ըրած է:

1906 - 1910 Էլերէկի Մերսովեան եւ Էլերէկի Ֆէնէսէկի Մուրինեան վարժարանաց
մէջ պաշտօնավարած է իր ուսուցիչ եւ տեսուչ: Այս հինգ տարիներու ընթացքին
հիմնած եւ վարած է կիրակնօրեայ լսարաններ, մեծապէս գնահատելի հոգեւոր արթ-
նութեան ստեղծելով:

1910 ին Խոպէրթ Գոլէճի մէջ գումարուած համաշխարհային Ուսանողական
Միութեան համաժողովին մասնակցած է Տարսոն Գոլէճի կողմէ ուրիշ երկու ուսանո-
ղաց հետ:

1910 - 1916, Նախագահին հրաւէրով ստանձնած է Տարսոնի Ամերիկան Գոլէճի
մէջ ուսուցչական պաշտօն, միաժամանակ վարելով մարզուն ուսուցչի պաշտօնը տեղուոյն
Ազգ. Լուսինեան Վարժարանի: Խմբագրած է «Կիւղնուս թերթը եւ գրական ու գրասի-
րական շարժում ստեղծած է Կիւղիկիոյ մէջ: 1910 - 1916 ի շրջանը, շնորհի Յակոբեանի
շամփրում, լիշտապես եղած է կրթական, դաստիարակչական եւ մշակութային շօշա-
փելի արդիւնքներով:

Առաջին ընդհանուր պատերազմը կուգայ քայլայել ամէն ինչ, եւ Յակոբեան
1916 Ապրիլ 22-ին կը ծերակալուի, խոշտանգումներու տակ Էլերէկ կը դրկուի. Իօ օր
ապրանի հարցաքննութեանց կ'նիթարկուի յայտնի զարդարար Պայմագամ Ձէրիկ
կողմէ եւ կը տարուի Կեսարիա, դատուելու համար պատերազմական Ալտեանի առջեւ:

Մէկուկէս տարի բանտը մնալէ յետոյ անպարտ կ'արծակուի եւ իրը զինուոր կը զրկուի երգումի կողմերը: Յակոբեանի բարի հոգիին ապացոյցներէն մէկն է բանտին մէջ «աղքատաց մնտուկ» մը հաստատելի:

Զինազադարին Եվլէրէկ կը վերագառնայ եւ 1918 Հոկտեմբերէն մինչեւ 1919 Մարտ՝ ազգօգուտ բնեղուն գործունշութիւն մը կ'ունենայ տեղւոյն վրայ, իրը հայ Ազգ. Միութեան ղեկավար անդամներէն մէկը:

1919 Մարտ 22ին Տարսոն կը վերագառնայ եւ պատերազմով լքուած ու քայրայուած գործերը կը վերակսի նոյն թափով ու եռանդով: Ազգ. Վարժարանի տնօրէնութիւնը կը վերատանձնէ եւ ապա կ'ընդունի Ամերիկան Գոլէճի Ազատեմիի բաժնին Տնօրէնի եւ Գոլէճի բաժնին փոխ-տնօրէնի պատասխանատու պաշտոնները, զրու ձեռնհասորէն եւ բազում արդիւնքով կը շարունակէ մինչեւ Կիլիկիոյ պարպումը: Այս շրջանին եւս, Յակոբեան իր տեսչական ու դաստիարակչական փափուկ պաշտոններուն հնա կը կատարէ գործոն գեր մը Տարսոնի ազգային հասարակական կեանքին մէջ իրեւ հայ Ազգ. Միութեան առենադպիկ, իրեւ հոգաբարձու, եւ ամենէն վերջ, իրեւ Տարսոնի պատուիրակ Կիլիկիոյ Համաժողովին (1921 Հոկտ.):

Կիլիկիոյ պարպումին Պոլիս կ'անցնի: Հոն հրաւէր կը ստանայ եւ կը ստանձնէ Պարտիզակի Ամերիկան բարձրագոյն վարժարանի (Էրէնքէօյ) Ռւսուցչութեան եւ ներքին տեսչութեան պաշտոնը՝ մինչեւ 1929: Այդ թուականին Լառնաքարա կուգայ եւ կը ստանձնէ տեղւոյն Ազգ. Վարժարանի պաշտոնը, տարիներ վերջ կը տեղափոխուի Նիկոսիոյ Մելիքեան-Ռևունեան վարժարանը, ուր մինչեւ 1946 կ'ունենայ յոյժ արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը՝ իրեւ հայկականի եւ կրօնագիտութեան ուսուցիչ:

Ինչպէս Լառնաքարայի, նաեւ Նիկոսիոյ, Յամակուսթայի եւ Լիմասոլի մէջ Յակոբեան տարիներով անվարծ եւ անխոնդ Գործիչը եւ Քարոզիչը կ'ըլլայ կիրակնօրեայ լրատրաններուն, օժանդակելով ժողովուրդի հոգեւոր արթնութեան եւ բարոյական գաստիարակութեան:

Յակոբեան բազմարդիւն եւ գարծեալ անվարծ գործիչը եւ տարածիչը եղած է՝ ամէն տեղ եւ ամէն ժամանակ՝ Հայկ. Բարեկ. Ընդհ. Միութեան որուն վեթեան ու վաստակաւոր անդամներէն է:

Յակոբեան աշխատակցած է բազմաթիւ թերթերու եւ հեղինակն է շատ մը հըրատակուած եւ անտիպ երկասիրութեանց (մանկավարժական, հոգեբանական, կրօնաւարոյական, ընկերային եւ պատմական):

Կիպրահայ Ռւսուցիչներու Միամիթիւնը կօս կ'ուղիչ ամբողջ կիպրահայութեան, Եվլէրէկ Ֆէնէմէցիներու, Հայկ. Բարեկ. Ընդհ. Միութեան, կրթասէկ անհատներուն եւ մշակութային կազմակերպութեանց, ինչպէս նաեւ մասմասորապէս Յակոբեանի հարիւրաւոր, հազարաւոր աշակերտներուն, որպէսզի իրենց գնահատական եւ երախտագիտական մամակցութիւնը փութան բերել, այս բազմավաստակ կրթական մշակին եւ արժանաւոր մտաւորական-գործիչն:

Ի դիմաց

Կիպրահայ Ռւսուցիչներու Միութեան

Կ. ՓԱՓԱԶԽԱՆ Յ. ԷՍէԿԻՒԼԵԱՆ Ո. ԿէՊէՆԼԱԱՆ
Գամձապան Ասենազպիր Ասենազիս

ԽԱՆՈԹ. — Նամակ եւ նույր դրել նետեւեալ հասցեին. —

Ս. Կեպինեան փոստակիդ թիւ 351 Նիկոսիա, Կիպրոս:

Նեռագրական հասցե — Կեպինեան-Նիկոսիա:

“SION,” an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in
JERUSALEM — PALESTINE